Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 16 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ (10.02.2009թ. մտից թիվ 4-42) վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի եւ 8-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմումատուն իր նախկին՝ 2009 թվականի հունվարի 16-ին սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով (մտից թիվ 4-8) բարձրացրել էր «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի սահմանադրականության հարց, որը քննության ընդունելը 2-րդ դատական կազմի կողմից մերժվել էր՝ նույն օրենքի պահանջներին չհամապատասխանելու եւ օրենքով սահմանված պետական տուրք չվճարելու հիմքերով (տե՛ս ՍԴ 2-րդ դատական կազմի 2009 թվականի փետրվարի 3-ի որոշումը):

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն դիմումատուն պետք է հիմնավորի իր կողմից վիճարկվող նորմերը («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մաս եւ 8-րդ մասի առաջին նախադասություն) կոնկրետ գործով **իր նկատմամբ** կիրառվելու հանգամանքը՝ **ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում գործը լուծող վերջնական դատական ակտի հիման վրա,** որպիսի ապացույց դիմողը չի ներկայացրել: Բացի այդ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի պահանջներին համապատասխան, նույն օրենքի 69 հոդվածում նշված գործերով, դիմողը **պարտավոր է վճարել պետական տուրք**, որպիսի պահանջը դիմողը չի կատարել, այլ իր դիմումում դարձյալ միջնորդել է ազատել իրեն պետական տուրքի վճարումից՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի «ժդ» կետի հիմքով:

4. Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմն անհրաժեշտ է համարում դարձյալ նշել, որ իր որոշումներով (23.01.2009թ., 03.02.2009թ. եւ 05.02.2009թ.) մերժելով քաղ. Ռ.Թորոսյանի համանման հիմնավորումներով դիմումների (08.01.2009թ. մտից թիվ 4-1, 16.01.2009թ. մտից թիվ 4-6, 16.01.2009թ. մտից թիվ 4-8) քննության ընդունումը, դատական կազմը պարզաբանել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի

հիմքով ներկայացված դիմումը նույն օրենքի **74 հոդվածի կանոններով քննության ընդունելու, հետեւաբար նաեւ՝ պետական տուրքի վճարումից ազատելու անհրավաչափությունը**:

Դատական կազմն անհրաժեշտ է համարում դիմումատուի կողմից օրենսդրական **վերոհիշյալ պահանջների պարտադիր կատարումը**, որը երաշխիք է նաեւ իր իրավունքների դատական-սահմանադրական պաշտպանության արդյունավետ իրագործումն ապահովելու համար:

5. Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27, 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը մերժել՝ չբավարարելով պետական տուրք վճարելուց ազատելու վերաբերյալ նրա միջնորդությունը:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան